ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2026 թվականի մարտի 2-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ «ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-26/08»

Շրջակա միջավայրի նախարարության կարիքների համար «Օդային եղանակով նյութերի ցրման ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-26/08» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2026 թվականի փետրվարի 27-ին ժամը 13:07:31-ին ստացված հարցադրումը և դրանց վերաբերյալ 2026 թվականի մարտի 2-ին ժամը 11:00-ին տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում N 1: Մեր կողմից 2026թ. հունվարի 15-ի հարցմանն ի պատասխան պարզաբանել էիք, որ հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից, իսկ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրում հաշվի է առնվել հնարավոր բոլոր մասնակիցների կողմից ներկայացվող տեխնիկական միջոցով ծառայությունների մատուցումը:
Հաշվի առնելով, որ ըստ առկա բնութագրի կատարողը ներկայացնում է համապատասխան ծրագրային հավելվածից արտահանված հաշվետվություն, այսինքն՝ նման ծրագրի պահանջն արդեն իսկ առկա է, հետևաբար տվյալ ծրագրին հասանելիությունը լրացուցիչ բեռ չի կարող առաջացնել, այլ ընդհակառակը՝ լրացուցիչ երաշխիք է հանդիսանում տվյալների արժանահավատությունը և թափանցիկությունը ապահովելու համար, ինչը բխում է Գնումների մասին ՀՀ օրենքով նախատեսված սկզբունքներից:
Հաշվի առնելով վերը նշվածը, խնդրում ենք պարզաբանել թե ինչ հիմնավորմամբ է գնահատող հանձնաժողովը համարել որ հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից: Հակառակ դեպքում խնդրում ենք ընդունել առաջարկությունը:

Պարզաբանում N : Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասը, ինչպես նաև «ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-26/08» ծածկագրով հրավերի 1-ին մասի 3-րդ բաժնի 3.3 կետը՝ հանձնաժողովը գտնում է, որ հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից: Պարզաբանում չի տրամադրվում, սակայն պատվիրատուն չի կարող ընդունել հավանական մասնակիցների առաջարկները տեխնիկական բնութագրերի վերաբերյալ՝ ըստ իրենց կոցմից մատուցվող ծառայությունների շրջանակների, ինչը կհանգեցնի խտրական պահանջների:

Հարցադրում N 2: Հրավերում կատարված փոփոխության համաձայն՝ Մասնակիցը պետք է ունենա թռիչքների իրականացման համար նախատեսված համապատասխան թույլատվական փաստաթղթերի փաթեթը:
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 20/12/2024թ. N 21-Ն հրամանով հաստատված կարգի 24-րդ կետի համաձայն՝ նույն կարգի 23-րդ կետում նշված գոտիներից (աերոդրոմի վազքուղուն կից գոտիներ) դուրս ընկած օդային տարածքում առանց նույն կարգով սահմանված թույլտվության կարող են շահագործվել 250 գրամից մինչև 50 կգ առավելագույն քաշ ունեցող և գյուղատնտեսական նպատակներով օգտագործվող անօդաչու օդանավերը՝ մինչև 50 մետր (165 ոտնաչափ) տեղանքի նկատմամբ հարաբերական բարձրության վրա: Այսինքն, հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված վնասատուների և հիվանդությունների դեմ անհրաժեշտ կենսաբանական հեղուկ պրեպարատի ցողումը 250 գրամից մինչև 50 կգ առավելագույն քաշ ունեցող և գյուղատնտեսական նպատակներով օգտագործվող անօդաչու օդանավերով իրականացնելու դեպքում, համաձայն վերոնշյալ նորմի, որևէ թույլտվություն չի պահանջվում:
Հաշվի առնելով վերը նշվածը, խնդրում ենք վերանայել տեխնիկական բնութագրում կատարված փոփոխությունների բովանդակությունը:

Պարզաբանում N 2: Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասը, ինչպես նաև «ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-26/08» ծածկագրով հրավերի 1-ին մասի 3-րդ բաժնի 3.3 կետը՝ հանձնաժողովը գտնում է, որ հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից: Պարզաբանում չի տրամադրվում, սակայն պատվիրատուն հարցի վերաբերյալ մեկնաբանում է, որ հավանական մասնակիցը պետք է ունենա թռիչքների իրականացման համար նախատեսված համապատասխան թույլատվական փաստաթղթերի փաթեթը՝ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-26/08» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ **Լ.Զոհրաբյանին:**

Հեռախոս՝ (011) 818 529:
Էլեկտրանային փոստ՝ gnumner@env.am:

«ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-26/08» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով